

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի ընդունելության հիմնական կանոնները:
2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքը, ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2008թ. ապրիլի 25-ի «ԼՂՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» N 57/Մ հրամանը, Համալսարանի կանոնադրությունը և ԼՂՀ այլ իրավական ակտեր:
3. Համալսարանի մագիստրատուրա կարող է ընդունվել բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձը:
4. Տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը հաստատում է ԼՂՀ կառավարությունը:
5. Համալսարանի կայքում և զանգվածային լրատվության միջոցներով Համալսարանը տալիս է ընդունելության հայտարարություն՝ մասնագիտությունների (ուսումնական ծրագրերի), տեղերի և ընդունելության կանոնների վերաբերյալ:
6. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպում է Համալսարանի ընդունող հանձնաժողովը:
7. Մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձը կամ հավատարմագրված ոչ պետական բուհի շրջանավարտը կամ բակալավրի որակավորման և մագիստրատուրայի մասնագիտության (ուսումնական ծրագրի) անհամապատասխանության դեպքում, մագիստրատուրա կարող է ընդունվել մասնագիտական քննության արդյունքով, որի շեմը սահմանվում է 8 միավոր: Մագիստրատուրայի ընդունելության մրցույթի ժամանակ մասնագիտական քննության գնահատականը դիտարկվում է նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականին կամ միջին որակական գնահատականին (ՄՈԳ) հավասար, բացի սույն կարգի 12-րդ կետի առաջին մասով սահմանված դեպքի:
8. Մագիստրոսի աստիճան ունեցող անձը 2-րդ մագիստրոսական կրթություն կարող է ստանալ միայն վճարովի հիմունքներով:
9. Մագիստրատուրայի անվճար տեղերում, մրցութային կարգով կարող են ընդունվել ԼՂՀ քաղաքացիները, իսկ արտերկրի քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա՝ թափուր տեղերի հաշվին:

10. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝
- 1) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտը.
 - 2) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենը (արտերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
 - 3) ինքնակենսագրությունը և 3 լուսանկար (3x4 չափսի),
 - 4) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակը (դրանց առկայության դեպքում):
11. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 2 փուլով.
- 1-ին փուլում մագիստրատուրայի ընդունելությունը՝ ըստ մասնագիտությունների անցկացվում է ԼՂՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար: 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անց է կացվում ընթացիկ տարվա հունիսի 10-ից մինչև հունիսի 30-ը:
- Երկրորդ փուլում վճարովի համակարգում ընդունելությունն անց է կացվում ընթացիկ տարվա հունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 1-ը:
12. Մագիստրատուրայի անվճար տեղերի մրցույթում առաջնահերթության իրավունք է վերապահվում բակալավրի որակավորման և մագիստրատուրայի մասնագիտության (ուսումնական ծրագրի) համապատասխանության դեպքում այն անձանց, որոնց նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը (ՄՈԳ) առնվազն 14-է:
- Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.
- ա) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականին կամ միջին որակական գնահատականին (ՄՈԳ).
 - բ) մասնագիտական առարկաներից ցուցաբերած գումարային միջին գնահատականին կամ միջին որակական գնահատականին (ՄՈԳ).
 - գ) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությանը,
 - դ) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականին կամ միջին որակական գնահատականին (ՄՈԳ):
13. Համալսարանը մրցույթով անցած անձանց հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրատարակվում է համալսարանի կայքում և նախապես տրամադրվում դիմորդներին:

Գիտխորհրդի նախագահ՝ ստորագրությամբ **Հ.Թորմաջյան**

Գիտական քարտուղար՝ ստորագրությամբ **Ա.Առաքելյան**